

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն
Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց
շրջեսցուք:

Հոով. 2—4.

Յարութեան գաղափարը լուսաբանող երեք զլխաւոր
աղբիւրներն են Բնութիւնը, Մաղիկ և Յիսուս:

Բնութիւնը, մարդկային կեանքին նման, ունի իր ե-
ղանակային հոլովումներն, որոնց յատկանիշները ուղիղ հա-
մեմատուում են մեր բոլորած շրջանների որպիսութեան
հետ: Ամառուան մէջ ականատես կը լինենք բնութեան գե-
ղատեսիլ փթթումին: Այնտեղ նշմարուող կեանքի լեցու-
նութիւնը մեզ կատարելութեան ճաշակը կը տայ: Սաւայն
աշնան չարագուշակ երևումը խանգարում է իրերի այդ
փայլուն դաշնաւորումը և ծայր կը տայ նիւթական քայ-
քայումի, որին զոհ կերթան մեր սիրած ծաղիկներն ու
կանանչութիւնը: Մահուան պատկերը անհաճ կը ցցուի մեր
աչքերի առջև բոլոր ողբերգական փուլերով, և ձմեռը բնու-
թեան գերեզմանը կը լինի: Կորուստի զգացումը ճնշում է
մեզ, նայում ենք կմախք դարձած ծառերին և յիշում թէ
բուսական որպիսի գեղեցիկ արտադրութիւններ փոշիացած
հանգչում են սպիտակաթոյր ծածկոցի տակ: Սաւայն այս
խորհուրդը՝ թէ այդ սառնային մեռելութեան մէջ կարե-
ւորութիւնների մեծագոյնը կայ պահուած, մեզ ոգևորում է,
ու ակնկառոյց սպասում ենք վերածննդեան հին փառքին:
Գարունը յարութեան եղանակն է թէ պատմական զուգա-
դիպութեամբ և թէ նիւթական բնորոշումով: Այս միջոցիս
մեր շուրջը բոլորովոր ծառերն ու ծաղիկները պարզ և
ազդու կերպով պատկերացնում են կեանքի վերածնունդը:

Մարդիկ էլ, բնութեան պէս, ենթակայ են ֆիզիքական հոլովումի: Բայց նրանք ցուցադրում են նաև հոգեկան արամադրութիւնների եղանակներ: Կըլինի ժամանակ, երբ ներշնչումի կեանքը կը բացուի իւրաքանչիւրիս առջև ու մեր քարձրագոյն անձը կացութեան կիշխի իբրև պաշտպան արդարութեան, սրբութեան, ճշմարտութեան և սիրոյ: Աստուածայինին ձգտող այս կեանքին մէջ գաղափարականի նուիրումը փոխանակ բառերով միայն շատագուրուելու, առաւելապէս փաստացի կը դառնայ զոհաբերող ծառայութեամբ և ուրիշ քրիստոնէավայել գործքերի արտադրումով: Այս վիճակը ամառուան ճոխութիւնն է յիշեցնում մեզ: Սակայն մարդկային հոգին իր աշունն էլ ունի երբ տկարանում է հաւատքը, յոյսերը մարում, տեսիլները անհետանում և մեր ստորնագոյն անձը, անասնական ճըգտումներով տարուբեր, ոտնակոխ անում նուիրական սրբութիւններն, ու գլորում մեզ ահաւոր և ամօթալի հակասութեանց լարիւրինթոսին մէջ ուր անձնասիրութիւն և ռիսկալութիւն խեղդում են վերջապէս իրական հոգեւոր կեանքը: Սոսկալի է նաև երևակայել հոգու ձմեռը, երբ սառն անտաքերութիւնը կը ծառայէ իբրև պատանդ և զգացումը կըլինի քարացումն: Յուսահատական այս պատկերին առջև քանի՜ սրտաախդիչ է ս. Զատիկի մեզ բերած պատգամը, թէ կարելի է կենդանութեան շունչ փչել այսօրինակ մեռելութեան մէջ, ու մեղքի պատճառաւ անշունչացած հոգուն պարգևել զարնանային վերակենդանացումն: Սաւարից դէպի լոյս, անմաքրութիւնից դէպի սրբութիւն և ատելութիւնից դէպի սէր դիմող կեանքեր գեղեցկօրէն կը բացատրեն վերածննդեան նշանակութիւնը:

Յիսուսի կեանքը մի մշտատես նուիրում եղաւ երկնաւոր Հօր կամքին ու թագաւորութեան, ուստի Նորահոգու թրթռացումները ի յայտ բերին զարմանալի միութիւն և ներգաշնակութիւն: Գրիստոս մարմնացումն էր հոգեկան կատարելութեան և Իր կեանքը արժանիքի տեսակէտից ելևէջ չունէր: Նա մարդկութեան ներկայացաւ մշտադաւար շնորհներով և ջերմագին սիրով, որպէսզի

օժտէ նրանց աստուածային առաքինութեամբ: Իր կենսատու պատգամների մարդոց սրտին մէջ դրած արձագանքը շունեցաւ դժբաղդաբար անփոփոխ զօրութիւն: Ոմանք խնդութեամբ ողջունեցին, իսկ ուրիշներ աշնանային հիւսանդոտ տրամադրութիւններով վերաբերուեցան Իրեն հանդէպ: Արդիւնքը եղաւ Յիսուսի կեանքին եղանակաւորումը երջանկութեան և տխրութեան. վայելումի և տառապանքի վիճակներով: Մարդկային հոգու ձմեռը նոյն իսկ ժպրհեցաւ անշնչացնել ճշմարտութեան այդ երկնային Ախոյեանը Խաչի խժոժութեան արհաւիրքով: Սակայն Գողգոթան գերեզմանը չեղաւ աստուածային յայտնութեան: Յիսուսի քարոզած և ապրած Աւետարանը ունեցաւ իր գարնանային վերածնունդը շնորհիւ յաբութեան հաւատին, որ ուղարկեց Առաքեալներն աշխարհի ամէն կողմերը կանգնելու համար Աստուծոյ Թագաւորութեան փառաւոր շէնքը և վազելու մարտիրոսացումի շաւիղէն: Յիսուսի Ֆիզիքական մահուան յաջորդող հոգեկան յաղթանակը ճոխապէս կը մեկնէ կեանքի վերածնունդը:

Բնութիւնից, մարդկային փորձառութիւնից և Յիսուսի կեանքից մեր քաղած այս լուսաբանութիւնները սովորեցնում են թէ կան վերածնունդի իրականութիւնը կառավարող մի շարք սկզբունքներ: Յիշենք սրանցից մէկ քանին:

1. Առանց մահուան վերածնունդ չի լինիլ: Գարնան փառքը յարութիւն է առնում ձմեռնային պարզութիւնից: Գաղափարական վիճակներ ևս չեն կարող առանց նախապատրաստութեան ստացուիլ: Յառաջագիմութիւնը ուղիղ գծի չի հետևում ու վերելքն էլ չէ յարատեւ: Նա ընկնելով և կանգնելով կիրազործուի, և կատարելութիւնը խնկատարութեան փորձառութիւնովը կը գնահատուի: Ուստի երբ կը տեսնենք թէ չարիք, վիշտ և սպասում կայ աշխարհի մէջ՝ պէտք է անձնատուր լինենք յոռետեսութեան: Փորձութիւններ մեզ կը տրուին որպէսզի յաղթենք նրանց: Աստուծոյ գաւալներին չի վայելում յուսահատ լինել և իսպառ Թաղուել տառապանքի և մեղքի մէջ: Մեզնից իւ-

բաբանչիւրը կարող է ներկայիս յարութիւն առնել նորոգեալ կեանքի ստացումով: Մահ՝ բայց յարութիւն: Այս է ա. Զատիկի նշանաբաններից մէկը:

2. Առանց վերածնունդի իրական կեանքի չի լինիլ: Ինչպէս որ ամառը կատարելագործումն է զարնան՝ այնպէս էլ վաւեր կեանքեր արդիւնքն են վերածննդեան լաւագոյն ձգտումների անուշման և պահպանութեան: Քրիստոնէական սրբակեացութիւնը ցոլացումն է խղճահար ապաշխարութեան պահերու: Մինչև որ մեր կեանքը բարձրագոյն վիճակների մշտական յարութիւնը չըլինի՝ իմաստ չի ունենայ մեր Քրիստոնեայ անուանուիլը: Քանզի Յիսուսի յարութիւնը մի անցեալ հաւատք չէ՝ այլ ամէն մարդու սրտին մէջ կրկնուելու կոչումը ունի: Սորա համար Քրիստոնեայ Յիկեղեցւոյն պարտքն է վերածնեալ կեանքեր գոյութեան բերել, և այդպիսով քարոզել յարուցեալ Քրիստոսը՝ որին աշխարհն այնքան կը կարօտի: Յարութիւն յաւերժութեան: Ահա ուրիշ մէկ նշանաբանը ա. Զատիկին:

3. Առանց իրական կեանքի եղանկութիւն չի լինիլ: Թրթուրը կը քնանայ իր հիւսած բանտին մէջ ու յետոյ արթնանալով յարութիւն կառնէ իբրեւ թիթեռնիկ: Վերածնունդի կեանքը թևեր կուտայ անոր որպէսզի թռչտի գեղեցկութիւնից գեղեցկութիւն և վայելէ բարձրագոյն հաճոյքներ: Սողոսկումի կեանքը անտեսիլ է և գետնաքարշ բայց ճակրդող գոյութեան առջև երկինքներն իսկ կը բացուին: Այն բոլոր մարդիկ որ Յիսուսի հետ յարութիւն կառնեն և իրանց շահը, նորա փառքի մէջ կը փնտռեն, անպայման կը տիրանան ներքին կատարեալ խաղաղութեան, քանզի չկայ մեծագոյն հոգեկան սփոփանք, քան գիտակցիլ թէ Քրիստոսով յաղթել ենք աշխարհը, Օրհնեալ է, ուրեմն, յարութիւն Տեառն:

Յովհաննէս Ղ. Կարապետեան*)

Ա. Էջմիածին

*) Յարգելի պ. Կարապետեանն աւարտած է Նիւ-Եօքքի Իւնիէն շեմարանն և Կոլումբիա համալսարանը: